

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Թաթուլ Մանասերյան

Բանալի բառեր` ֆինանսական անվտանգություն, ֆինանսական համակարգ, համաֆինանսավորում, պետական ծախսեր:

Երկրի տնտեսության մրցունակության մակարդակի շարունակական բարելավումը պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում ձևավորված ֆինանսական համակարգի արդյունավետությամբ: Այնուհայտ է, որ առանց զարգացած և կայուն ֆինանսական համակարգի հնարավոր չէ ապահովել տնտեսության մյուս հատվածների դինամիկ զարգացումը:

Ֆինանսական համակարգի կայունությունը և անվտանգությունը գնահատելու նպատակով միջազգային ասպարեզում լայնորեն կիրառվում են սթրես-թեստեր, որոնք թույլ են տալիս տարբեր շոկային սցենարների հավանականության դեպքում գնահատել ֆինանսական համակարգի կամ դրա առանձին մասնակիցների վնասները և անցնել ֆինանսական կայունության ապահովման հաջորդ` ռիսկերի կառավարման կարևոր փուլին [1]: Ֆինանսական անվտանգության ապահովման նպատակով իրականացվող քաղաքականությունը, կախված համակարգում առկա վիճակից կամ հավանական զարգացումներից, կարող է ենթադրել քայլերի ոչ միատեսակ համախումբ: Մասնավորապես, եթե ֆինանսական համակարգի ցուցանիշները թույլատրելի մակարդակում են, ապա համապատասխան քաղաքականությունն այս դեպքում կրում է կանխարգելիչ բնույթ: Այսպիսի քաղաքականությունը ենթադրում է մի շարք մակրոպրոդեկցիալ ցուցանիշների շարունակական մշտադիտարկում և ֆինանսական համակարգի արդյունավետության վրա ազդող արտաքին ռիսկերի գնահատում: Կանխարգելիչ քաղաքականությունն, ըստ էության, ուղղված է տվյալ պահին համակարգում առկա վերահսկման և կարգավորման գործիքակազմի կիրառման միջոցով ֆինանսական կայունության ապահովմանը [2]:

Ֆինանսական համակարգում տատանումները, գտնվելով թույլատրելի միջակայքում, միաժամանակ կարող են ունենալ դրանից դուրս գալու հավանականություն, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական համակարգի որևէ հատվածի գործունեության կամ դրանում արդեն իսկ ձևավորված ոչ ֆինանսական հարաբերությունների խթանման: Դա բացառելու համար, ֆինանսական անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականությամբ, պետք է կիրառվեն ֆինանսական շուկայի կարգավորման նոր գործիքներ, ռիսկերի գնահատման նոր մեթոդներ, ակտիվների հնարավոր կորուստների պահուստավորման ու կապիտալի համարժեքության նոր պահանջներ և, ընդհանրապես, ֆինանսական համակարգի կայունությանն ուղղված միջազգային հեղինակավոր կառույցների կողմից երաշխավորված մոտեցումներ: Այլ խոսքով, այդպիսի քաղաքականությունը ենթադրում է ոչ միայն առկա գործիքակազմի ընդլայնում ու արդիականացում, այլ նաև անհրաժեշտ նորմատիվային դաշտի ձևավորում [3]:

Ֆինանսական անվտանգության ապահովման տեսանկյունից հնարավոր են դեպքեր, երբ ֆինանսական համակարգի տատանումները թույլատրելի մակարդակից դուրս են, և համակարգն ի վիճակի չէ իրականացնել ֆինանսական միջնորդի ու վճա-

* Հոդվածն ընդունվել է 03.09.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել տնտեսագիտության դոկտոր Ա. Մարտիրոսյանը: 14.09.21:

րա հաշվարկային իր ֆունկցիաները: Նման դեպքերում քաղաքականությունը պետք է կրի վերականգնողական բնույթ և ներառի ձգնաժամային երևույթների հաղթահարման քայլերի մի ամբողջություն: Որպես հակաձգնաժամային միջոցառումների ամբողջության կարևոր բաղկացուցիչներ կարող են հանդիսանալ առևտրային բանկերի կողմից փոխառու միջոցների ձեռքբերման հնարավորությունների ընդլայնումը, վերջին ատյանի վարկատուի գործառույթի շրջանակներում արտակարգ իրացվելիության տրամադրումը և այլն: Այս և այլ լուծումները բխում են գլոբալ ձգնաժամերի դասերից, որոնք կարևոր է տեղայնացնել նոր ժամանակներում, երկրի առանձնահատկություններին և արդի մարտահրավերներին համահունչ [4]:

Ներկայումս ֆինանսական համակարգում հարաբերությունների կարևոր սուբյեկտներ են պետությունը, տնտեսվարող սուբյեկտները, կազմակերպությունները և քաղաքացիները: Ինչ վերաբերվում է դրամական ֆոնդերի ձևավորման և օգտագործման գործընթացում առաջացած հարաբերություններին, ապա դրանք պայմականորեն կարելի է դասակարգել ըստ.

- պետության և ձեռնարկության. դրանք ընդգրկում են պետությունների վճարումների համակարգը և պետական կազմակերպությունների տարբեր ֆոնդեր: Դրանց շնորհիվ է ձևավորվում պետական կենտրոնացված եկամուտը:
- տնտեսվարող սուբյեկտների. դրանք ձևավորվում են՝ հիմքում ունենալով պայմանագրեր, որոնք պարունակում են փոխադարձ վճարումների պարտականություններ,
- կազմակերպությունների և բանկերի,
- տնտեսվարող սուբյեկտների և դրանց կառուցվածքային ենթաբաժինների,
- պետության և հասարակական կազմակերպությունների,
- պետության և բնակչության՝ բնակչությանը տարբեր տիպի տրանսֆերտային վճարումների կապակցությամբ:

Հարաբերությունները նշված խմբերի միջև տարբեր երկրներում ունեն կարգավորվածության տարբեր մակարդակ: Վերջիններիս արդյունավետությունը մեծապես կախված է ինչպես այդ հարաբերությունների կարգավորման համալիրությունից, այնպես էլ՝ ֆինանսական համակարգի զարգացվածության աստիճանից: Հայաստանում գործող բանկերը երկրի ֆինանսական համակարգի ամենախոշոր ֆինանսական կազմակերպություններն են, որոնցում ներկայումս կենտրոնացված են ֆինանսական համակարգի ակտիվների 85%-ից ավելին [ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական կայք]: Հանրապետության բանկային համակարգի առանցքային դերակատարներ և բաղկացուցիչներ են Կենտրոնական բանկը, առևտրային բանկերը, նրանց մասնաձյուղերը և գործառնական գրասենյակները, ինչպես նաև՝ օտարերկրյա բանկերի մասնաձյուղերն ու ներկայացուցչությունները: Բանկերի հիմնական գործունեությունը, որպես կանոն, ներառում է բանկային հաշիվների բացումը և վարումը, վարկերի տրամադրումը, ավանդների ընդունումը, ինչպես նաև՝ վճարային գործիքների տրամադրումը և սպասարկումը: Իհարկե, առևտրային բանկերը կարող են կատարել նաև ներդրումներ, իրականացնել չեկերով և արտարժույթով գործառնություններ, մատուցել այլ ծառայություններ: ՀՀ տարածքում բանկերի գործունեությունը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով:

Վճարային համակարգերն ունեն կարևոր նշանակություն և դրամավարկային քաղաքականության իրականացման գործում էական ազդեցություն ֆինանսական անվտանգության վրա: Այդ իսկ պատճառով Կենտրոնական բանկը պետք է հատուկ ուշադրություն դարձնի համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթե-

րի հաշվարկային համակարգերին, ինչպես նաև՝ դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:

Արժույթային համակարգի ձևավորման և զարգացման կարևորագույն գործոն է գնահատվում արժույթային քաղաքականությունը և ռեժիմի ընտրությունը: Այն մեծ նշանակություն ունի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման գործում և ստեղծում է անհրաժեշտ ու բավարար պայմաններ տարբեր երկրների արժույթների իրական արժեքները համեմատելու և փոխարկելու համար:

Արժույթի միջազգային հիմնադրամն առանձնացնում է ֆիքսված փոխարժեքի, անցումային և լողացող փոխարժեքի արժույթային ռեժիմներ: ՀՀ կենտրոնական բանկը վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն: Կենտրոնական բանկի միջամտությունն արժույթային շուկային իրականացվում է՝ ելնելով դրամավարկային քաղաքականության նպատակներից: Շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա Կենտրոնական բանկը հրապարակում է արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները:

Կարևոր է նկատել, որ միջազգային պրակտիկայում, կախված տնտեսությունում ձևավորված հարաբերությունների առանձնահատկություններից, առանձնանում են ֆինանսական շուկայի կարգավորման տարբեր մոդելներ:

ԱՄՆ-ում, Իսպանիայում, Կիպրոսում, Պորտուգալիայում, Ֆինլանդիայում, Ռումինիայում, Լիտվայում, Լյուքսեմբուրգում, մասնակիորեն՝ նաև Իտալիայում, ֆինանսական շուկայի յուրաքանչյուր հատվածի համար վերահսկողությունը կատարվում է առանձին մարմնի կողմից: Այս տարբերակի պայմաններում մեծանում է ֆինանսական շուկայի առանձին հատվածների արդյունավետ կարգավորման հավանականությունը: Տվյալ մոդելի թույլ կողմն այն է, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում հասնել գործընթացի բոլոր մարմինների միջև համաձայնության:

Ֆինանսական շուկայի կարգավորման մեկ այլ մոդելի համաձայն՝ դրանից բխող գործառնությունները բաժանվում են իշխանության երկու թևերի միջև: Այսպիսի տարբերակ կիրառվում է Կանադայում և Նիդեռլանդներում:

Գերմանիայում, Դանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Ճապոնիայում, ինչպես նաև Հայաստանում ֆինանսական շուկայի կարգավորման գործառնությունները կենտրոնացված են մեկ մարմնում: ՀՀ-ում այդպիսի մարմին է հանդիսանում Կենտրոնական բանկը, որը, որպես ֆինանսական անվտանգության պատասխանատու, հետապնդում է միասնական, անկախ և արդյունավետ վերահսկողության և կարգավորման համակարգի ստեղծման, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների մատուցման գործընթացում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակ:

Ֆինանսական համակարգին հատուկ հարաբերությունների կարգավորումը և վերահսկողությունը պահանջում է ինչպես ֆինանսական շուկայի տարբեր հատվածներին բնորոշ ռիսկերի, այնպես էլ ֆինանսական շուկայի այլ հատվածների վրա դրանց ազդեցության գնահատում: Անգամ այն դեպքերում, երբ ֆինանսական շուկայի առանձին հատվածների գործունեության ազդեցությունը միմյանց վրա ակնհայտ չէ, այդուհանդերձ, մի հատվածին բնորոշ ռիսկերը կարող են էականորեն ազդել այլ հատվածների գործունեության արդյունավետության վրա: Այդ իսկ պատճառով միավորված կարգավորման և վերահսկողության դերը կտրուկ մեծանում է ոչ միայն ֆինանսական անվտանգության և ֆինանսական շուկայի մասնակիցների համար ազատ մրցակցային պայմանների ապահովման, այլ նաև ֆինանսական շուկայի հաճախորդների շահերի պաշտպանության գործում:

Միասնական կարգավորման համակարգի մոդելն առաջինը ներդրվել է Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այս մոդելին անցումը հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական հաստատությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողու-

յան անհրաժեշտությամբ, ֆինանսական ձգնաժամերի հետևանքների հաղթահարմամբ, ինչպես նաև՝ ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ:

Ֆինանսական անվտանգության ապահովումը յուրաքանչյուր երկրի կարևորագույն խնդիրներից մեկն է, քանի որ առանց կառավարելի գնաձի, գործազրկության ցածր մակարդակի և տնտեսական բարձր աճի հնարավոր չէ հասնել զարգացած և կայուն ֆինանսական համակարգի առկայության: Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, ինչպես նաև շատ երկրների կենտրոնական բանկերը հրապարակում են ֆինանսական կայունության տարեկան զեկույցներ: Ընդսմին, կարևոր է հաշվի առնել նաև 2020թ. ծայր առած համավարակի ազդեցությունը ֆինանսական անվտանգության վրա և դրանից բխող հնարավոր հետևանքները [7]: ԱՄՀ-ի կողմից այդ ուղղությամբ մեթոդական ուղեցույցը հրապարակելուց հետո այդպիսի հաշվետվություններ սկսեց ներկայացնել նաև Հայաստանը: Հաշվետվություններում ներկայացվում են որոշակի ժամանակահատվածի համար հանրապետությունում ֆինանսական կայունության վերաբերյալ կենտրոնական բանկի գնահատականը, առկա և հավանական ռիսկերը, դրանց կանխարգելման ուղղությամբ կատարվող միջոցառումները և այլն: Հաշվետվության հրապարակումը թույլ է տալիս բարձրացնել ֆինանսական հաստատությունների, ձեռնարկությունների, տնտեսվարողների և բնակչության տեղեկացվածության մակարդակը, ապահովում է ինչպես կենտրոնական բանկի, այնպես էլ ֆինանսական համակարգի այլ հատվածների գործունեության թափանցիկությունը: Հավանական ռիսկերի աղբյուրների և ֆինանսական անվտանգության խոցելիության վերաբերյալ հավետվություններում ներկայացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանում ոչ միանշանակ զարգացումների ժամանակ ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Կարգավորման տարբեր մոդելների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր քաղաքական կառուցվածք և ֆինանսական շուկաներ ունեցող երկրներում որոշակի արդյունավետությամբ կարող է աշխատել դրանցից միայն որևէ մեկը: ՀՀ-ին բնորոշ առանձնահատկությունների պայմաններում առավել նախընտրելի է ֆինանսական շուկայի միասնական կարգավորման մոդելի կիրառումը, որը թույլ է տալիս.

1. գնահատել իրական և հնարավոր ցնցումների ազդեցությունը ֆինանսական շուկայի վրա և արդյունավետ բաշխել ռիսկերի ոլորտի տարբեր հատվածների միջև,

2. մշակել հնարավոր ռիսկերի կառավարման առավել արդյունավետ քաղաքականություն և ֆինանսական ծառայությունների վերահսկողության մոտեցումներ,

3. ընդլայնել մեզակարգավորիչի հնարավորությունները կարգավորող մարմինների գործունեության համաձայնության ժամանակ, խուսափել ավելորդ վերահսկողական գործառնություններից,

4. մեծացնել միասնական մոտեցումների և տեղեկատվության մշակման ու օգտագործման հնարավորությունները,

5. բարձրացնել կարգավորողի պատասխանատվության աստիճանը որոշումների կայացման ժամանակ,

6. ապահովել մարդկային ռեսուրսների, պետական միջոցների և խնայողությունների ռացիոնալ օգտագործումը:

Հարկ է նշել, որ վերահսկողության միավորված մարմնի լիազորությունների անհարկի մեծացումը կարող է հանգեցնել վերահսկման մենաշնորհային գործունեության կարգավորող մարմնին շեղելով իր հիմնական գործառնություններից:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական համակարգի կարգավորման մոդելների վերլուծության արդյունքները վկայում են, որ մեզակարգավորիչի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ միասնական կարգավորման մարմնի առաջ դրված խնդիրներն ու նպատակները լինեն հստակ սահմանված, իսկ դրանց առաջնահերթությունները՝ որոշված:

Ինչ վերաբերվում է ֆինանսական համակարգի ամրապնդմանն ուղղված միջոցներին, ապա որպես այդպիսին կարելի է առանձնացնել.

- հարկային համակարգի արդյունավետության բարձրացումը, հարկերի քանակի նվազեցումը և նրանց հավաքագրման մակարդակի բարձրացումը,
- բյուջեի դեֆիցիտի ոչ ինֆլյացիոն ֆինանսավորման մեթոդների զարգացումը,
- ֆինանսական ռեսուրսների արդյունավետ վերաբաշխումը՝ ելնելով համապետական նախապատվություններից,
- ազգային պաշտպանության ծախսերի իրականացումը,
- բյուջետային միջոցների օգտագործման վերահսկողական համակարգի մեխանիզմի ներդրումը,
- պետական ծախսերի նպատակային ֆինանսավորումը և, միայն հաստատված ծրագրերին համապատասխան, ձեռնարկություններին և կազմակերպություններին բյուջետային օգնության տրամադրումը՝ ծրագրային-նպատակային ծախսերի պետական ֆինանսավորման միաժամանակյա կարգավորման պայմաններում:

Այս ամենին կարելի է հավելել նաև վերջին տարին ՀՀ Կառավարության կողմից առանձին մասնավոր բիզնես ծրագրերի համաֆինանսավորումը, որը թույլ է տալիս աստիճանաբար ետ վերադարձնել պետության մասնաբաժինը և բարելավել ֆինանսական անվտանգությունը միկրո մակարդակում: Ցանկալի է, որ հաշվի առնվեն և կիրառվեն միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած հաջողության պատմություններ՝ success stories [6]:

Դրամավարկային հարաբերությունների ոլորտում, Հայաստանի բանկային համակարգի հուսալի գործունեության ապահովման ուղղությամբ, հիմնական միջոցները պահանջում են.

- ՀՀ դրամի կայունության ապահովում,
- հաշվարկային և զանձապահական ծառայությունների համակարգերի հուսալի կազմակերպումը, այդ թվում՝ բանկային հեռահաղորդակցության - միջոցների տեխնիկական պաշտպանությունը չվավերացված մուտքից և ձևական բանկային փաստաթղթերի դրամաշրջանառության մեջ ներդրման հանցավոր տարրերի չեզոքացում,
- համաժամանակյա և արդյունավետ միջոցների կիրառումը բանկերի ավանդատուների շահերի պաշտպանության ուղղությամբ, ՀՀ Կենտրոնական Բանկի՝ առևտրային բանկերի գործունեության վերահսկողության դերի բարձրացում՝ դրանց զանգվածային սնանկացումը թույլ չտալու համար,
- պետական վերահսկողական մարմինների կողմից տեղական շուկայի սուբյեկտների դրամական ընթացիկ և կապիտալ գործառույթների հսկողության մեխանիզմների կատարելագործում:

Տարածքների համաչափ զարգացման քաղաքականության ոլորտում մի շարք համայնքների զարգացման տեմպերում տեղ գտած անհամաչափությունները կրճատելու և երկրի միասնական զարգացման ապահովման համար պետք է մշակվի պետության և համայնքների՝ տնտեսական և այլ շահերի համադրության ռացիոնալ ռազմավարություն: Այն պետք է հիմնվի՝ տարածքների և տեղական մակարդակների տնտեսական գործընթացներում պետական մարմինների դերի սահմանափակման, շուկայական մեխանիզմների ստեղծման և պահպանման համար նրանց ջանքերի կենտրոնացման, միասնական տնտեսական քաղաքականության իրականացման վրա: Ներկայումս իրականացվող համայնքների խոշորացման գործընթացում անհրաժեշտ է անցկացնել տարածքների տարաբաժանման համակարգային և գիտական հիմնավորում՝ նրանց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի և պայմանների հիման վրա,

ապահովել զարգացման ցածր մակարդակ ունեցող համայնքներին վերաբերող չափա-
նիշների մշակումը, օրենսդրական ամրապնդումը և նրանց պետական օգնության
տրամադրումը, ինչպես նաև մշակել և իրականացնել ծրագրերի շարք՝ առանձնակի
բարդ տնտեսական պայմաններով՝ համայնքների աջակցման և ազգաբնակչության
ցածր կենսամակարդակի ուղղությամբ սոցիալական ցնցումների և տվյալ շրջանների
ակտիվացման սեփական աղբյուրների կանխարգելման նպատակով[8]: Հետևաբար
այս ոլորտում պետական ռազմավարության գերակա ուղղությունները պետք է լինեն.

- համայնքների տնտեսությունների վերակազմակերպումը՝ տեղական արդյու-
նաբերության ճյուղերի զարգացման գերակայությամբ,
- ագրոարդյունաբերական և գյուղմթերքների վերամշակմամբ մասնագիտաց-
ված համայնքների սեփական աղբյուրների զարգացման վերականգնումը և
ակտիվացումը,
- ծայրահեղ պայմաններով համայնքներում ձգնաժամային վիճակի հաղթահա-
րումը, բնական աճի համար բավարար պայմանների ստեղծումը,
- նոր տեսակի տարածքային-արտադրական համալիրների ձևավորումը, որոնք
կողմնորոշված են շուկայի պահանջներին համապատասխան արտադրանքի
արտադրությանը և իրացմանը, գերազանցապես ապակենտրոնացված ներդ-
րումների հաշվին,
- միջհամայնքային ենթակառուցվածքային համակարգերի զարգացումը
(տրանսպորտ, կապ, տեղեկատվական տեխնոլոգիաներ):

Տարածքների զարգացման կանոնակարգման գործում պետության մասնակցու-
թյան հիմնական ձևերը կարող են լինել.

- արտադրանքների առաքման պետական պատվերների վերաբաշխումը հա-
մապետական կարիքների համար,
- մասնակցությունը առանձին կառուցվածքակազմավորող ներդրումային նա-
խագծերում՝ դրանց իրականացման մրցութային և պայմանագրային համա-
կարգերի օգտագործմամբ,
- համայնքային զարգացման ծրագրերի պետական աջակցման իրականացումը,
- համայնքների և պետական բյուջետային համակարգերի փոխգործունեությու-
նը՝ նյութական աջակցման նպատակով:

Այսպիսով, ՀՀ ֆինանսական համակարգի անվտանգության ապահովումը պա-
հանջում է հաշվի առնել ներկայումս երկրում ձևավորված ֆինանսական շուկայի
տարբեր հատվածների առանձնահատկությունները և դրանց զարգացման միմյանցից
տարբերվող մակարդակները: Միաժամանակ, հաշվի առնելով, մի կողմից ֆինանսա-
կան համակարգի կարգավորման օրենսդրական և իրավական հիմքերը, ինչպես նաև
այս ոլորտում ձեռք բերված միջազգային ուսանելի փորձը, անհրաժեշտ է մշակել հան-
րապետությունում ֆինանսական համակարգի անվտանգության ապահովման և
զարգացման առաջնահերթությունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Montesi, G.; Papiro, G.; Fazzini, M.; Ronga, A. Stochastic Optimization System for Bank Reverse Stress Testing. *J. Risk Financial Manag.* 2020, 13,, p.174.
2. Hannig, A., and S. Jansen. 2010. Financial Inclusion and Financial Stability: Current Policy Issues. ADBI Working Paper 259. Tokyo: Asian Development Bank Institute. Available: <http://www.adbi.org/working-paper/2010/12/21/4272.financial.inclusion.stability.policy.issues/>

3. Christian Laux, Conference Papers and Responses Financial instruments, Financial Reporting, and Financial Stability, Accounting and Business Research Journal, pages 239-260 | Published online: 27 Jun 2012, <https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/00014788.2012.681857>
4. Justin Fox, The Social and Political Costs of the Financial Crisis, 10 Years Later, RECESSION, What We've Learned from the Financial Crisis, Harvard Business Review, November 2013 Issue, p.2.
5. ՀՀ Կենտրոնական Բանկի պաշտոնական կայք, www.cba.am
6. Global Financial Stability Report Update: Financial Conditions Have Eased, but Insolvencies Loom Large, June 25, 2020.
7. Simon Grima & Luca Caruana, 2017. "The Effect of the Financial Crisis on Emerging Markets: A Comparative Analysis of the Stock Market Situation Before and After," European Research Studies Journal, European Research Studies Journal, vol. 4B, pages 727-753.
8. https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/qax44-18_1.pdf

ԱՄՓՈՓՈՒԳԻՐ

ՀՀ ֆինանսական համակարգի անվտանգության ապահովման առանձնահատկությունները և առաջնահերթությունները Թաթուլ Մանասերյան

Երկրի տնտեսության մրցունակության մակարդակի շարունակական բարելավումը պայմանավորված է տվյալ ժամանակահատվածում ձևավորված ֆինանսական համակարգի արդյունավետությամբ: Ակնհայտ է, որ առանց զարգացած և կայուն ֆինանսական համակարգի հնարավոր չէ ապահովել տնտեսության մյուս հատվածների դինամիկ զարգացումը: Ֆինանսական համակարգի կայունությունը և անվտանգությունը գնահատելու նպատակով միջազգային ասպարեզում լայնորեն կիրառվում են ստրես-տեստեր, որոնք թույլ են տալիս տարբեր շոկային սցենարների հավանականության դեպքում գնահատել ֆինանսական համակարգի կամ դրա առանձին մասնակիցների վնասները և անցնել ֆինանսական կայունության ապահովման հաջորդ՝ ռիսկերի կառավարման կարևոր փուլին: Ֆինանսական անվտանգության ապահովման նպատակով իրականացվող քաղաքականությունը, կախված համակարգում առկա վիճակից կամ հավանական զարգացումներից, կարող է ենթադրել քայլերի ոչ միատեսակ համախումբ: Հաշվի առնելով, մի կողմից ֆինանսական համակարգի կարգավորման օրենսդրական և իրավական հիմքերը, ինչպես նաև այս ոլորտում ձեռք բերված միջազգային ուսանելի փորձը, անհրաժեշտ է մշակել հանրապետությունում ֆինանսական համակարգի անվտանգության ապահովման և զարգացման առաջնահերթությունները:

РЕЗЮМЕ

Особенности и приоритеты обеспечения безопасности финансовой системы РА Татул Манасерян

Ключевые слова: финансовая безопасность, финансовая система, софинансирование, государственные расходы.

Постоянное повышение уровня конкурентоспособности экономики страны обусловлено эффективностью финансовой системы, сформировавшейся за данный период. Очевидно, что без развитой и стабильной финансовой системы невозможно обеспечить динамичное развитие других секторов экономики. Стабильность финансовой системы требует тщательной

оценки финансовой безопасности с помощью широко используемых на международной арене стресс-тестов, позволяющих оценить потери финансовой системы или отдельных ее участников в случае различных сценариев шока и перейти к следующему этапу финансовой устойчивости - управлению рисками. Политика финансовой безопасности, в зависимости от ситуации в системе или возможных событий, может включать разнородный набор шагов. Принимая во внимание, с одной стороны, законодательно-правовые основы регулирования финансовой системы, а также международный опыт, накопленный в этой области, необходимо разработать приоритеты обеспечения и развития безопасности финансовой системы в Армении.

SUMMARY

Peculiarities and Priorities of Ensuring the Security of the RA Financial System Tatul Manaseryan

Key words: financial security, financial system, co-financing, public expenditures.

The continuous improvement of the level of competitiveness of the country's economy is conditioned by the efficiency of the financial system developed during the given period. It is obvious that without a developed and stable financial system it is impossible to ensure the dynamic development of other sectors of the economy. Financial system stability requires careful assessment of financial security through stress tests that are widely used in the international arena, which allow to assess the losses of the financial system or its individual participants in the event of various shock scenarios and to move to the next stage of financial stability - risk management. Financial security policies, depending on the situation in the system or possible developments, may involve a heterogeneous set of steps. Taking into account, on the one hand, the legislative-legal bases of the financial system regulation, as well as the internationally learned experience gained in this field, it is necessary to work out the priorities of ensuring and developing the security of the financial system in the Armenia.